https://doi.org/10.46991/S&L/2020.88.090

ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Նելլի Հարությունյան
Փաստաբան

Փաստաբանությունը փաստաբանների մասնագիտական միավորում է, որը, լինելով քաղաքացիական հասարակության ինստիտուտ, չի մտնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի մեջ:

*Փաստաբանությունը գործում է **անկախության, օրինապահության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության սկզբունքների հիման վրա:***

Փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն իրականացնում է փաստաբանը, և ուղղված է իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմանն ու պաշտպանությանը՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով:

Այսպես են բնորոշվում փաստաբանությունը և փաստաբանական գործունեությունը «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության գործող օրենքում[1]:

1990-ական թվականների վերջերից սկսված դատահիրավական բարեփոխումների արդյունքում վերջ դրվեց փաստաբանության երկրորդային դերին, որն սկիզբ էր առել խորհրդային տարիներից:

Փաստաբանական գործունեությունն ամրագրում ստացավ 1995 թվականի Սահմանադրության 40-րդ, 93-րդ և 116-րդ հոդվածներում: Մասնավորապես.

Հոդված 40. *Յուրաքանչյուր ոք ունի **իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով նախատեսված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում անվճար:** Յուրաքանչյուր ոք ունի ձերբակալման, կալանավորման կամ մեղադրանքի առաջադրման պահից **պաշտպան ունենալու իրավունք**…*

Հոդված 93. *Օրինական ուժի մեջ մտած վճիռները, դատավճիռները և որոշումները վճռաբեկ դատարանում վերանայվում են գլխավոր դատախազի, նրա տեղակալների կամ **հատուկ արտոնագիր ունեցող և վճռաբեկ դատարանում գրանցված փաստաբանների** բողոքների հիման վրա:*

Հոդված 116. *Սահմանադրության ուժի մեջ մտնելու պահից՝*

…13) դատարանների օրինական ուժի մեջ մտած վճիռները, դատավճիռները և որոշումները գերագույն դատարանը վերանայում է գլխավոր դատախազի, նրա տեղակալների և հատուկ արտոնագիր ունեցող, գերագույն դատարանում գրանցված փաստաբանների բողոքների հիման վրա…

1998 թվականի հունիսի 18-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Փաստաբանական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը՝ փաստաբանության վերաբերյալ առաջին օրենքը:

Այդ օրենքով սահմանվեցին փաստաբանի և փաստաբանական գործունեության հասկացությունը, արտոնագիր ստանալու համար ներկայացվող պահանջները, փաստաբանի գործունեության երաշխիքները ներմուծվեց փաստաբանների արտո-

---

[1] Տե՛ս «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-29-Ն, ընդունված՝ 14.12.2004թ.) 3-րդ հոդված և 5-րդ հոդվածի 1-ին մաս:

նագրման գաղափարը: Օրենքի հիման վրա ստեղծվեցին փաստաբանների միություները, որոնց նպատակն էր պաշտպանել իրենց անդամների իրավունքները և օրինական շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև դատարանում, կազմակերպել անդամների ուսուցում և վերապատրաստում, վերահսկողություն իրականացնել իրենց անդամների կողմից «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» և միության կանոնադրության պահանջների պահպանման նկատմամբ: Օրենքը թույլ էր տալիս ստեղծել մեկից ավելի փաստաբանական միություններ: Օրենքով ամրագրվեց փաստաբանական գործունեության վճարովի լինելը, ինչպես նաև սահմանվեց, որ օրենքով նախատեսված դեպքում անվճար իրավաբանական օգնություն ապահովում է պետությունը՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների միության միջոցով:

2004 թվականին առաջացավ «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենքի ընդունման անհրաժեշտություն, ինչը պայմանավորված էր այն հանգամանքով, որ առանձին-առանձին միությունները փոքրաթիվ ու ոչ ազդեցիկ էին և չէին կարողանում իրականացնել իրենց առաքելությունը, բացի այդ՝ անհրաժեշտ էր հստակեցնել փաստաբանության և պետության փոխհարաբերությունները, սահմանելու այն հիմնական սկզբունքները, որոնց հիման վրա գործելու է փաստաբանությունը, սահմանել հասարակության համար իրավաբանական օգնության մատչելիությունն ապահովելու երաշխիքները:

2004 թվականի դեկտեմբերի 14-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որի նպատակն էր հզորացնել փաստաբանության ինստիտուտը: Նոր օրենքով ներդրվեց մեկ միասնական կառույցի գաղափարը, որը պետք է պաշտպաներ իր անդամների իրավունքները և շահերը, ապահովեր մասնագիտական ուսուցումը և վերապատրաստումը, միջոցներ ձեռնարկեր փաստաբանության հեղինակության բարձրացման ուղղությամբ: Սահմանվեց այն հիմնական սկզբունքները, որոնց հիման վրա պետք է գործեր փաստաբանությունը՝ անկախություն, օրինապահություն, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարություն: Սահմանվեց նաև փաստաբանի գործունեության երաշխիքները: Ներդրվեց հանրային պաշտպանի ինստիտուտը, մասնավորապես նախատեսվեց, որ պետության կողմից երաշխավորված անվճար իրավական օգնությունը տրամադրվում է հանրային պաշտպանի գրասենյակի միջոցով, որը փաստաբանների պալատի կազմում գործող կառուցվածքային ստորաբաժանում է: 2006 թվականից Հայաստանի Հանրապետությունում սկսեց գործել հանրային պաշտպանի ինստիտուտը, ընդ որում կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում անվճար իրավաբանական օգնություն տրամադրվում էր ինչպես քրեական, այնպես էլ՝ որոշակի բնագավառի քաղաքացիական գործերով, մասնավորապես՝ ալիմենտի գանձման վերաբերյալ գործերով, խեղման կամ առողջությանն այլ վնասի փոխհատուցման վերաբերյալ գործերով[1]:

Թեև օրենքով կարգավորվեցին փաստաբանության համար կենսական նշանակություն ունեցող շատ հարցեր, սակայն դեռևս հստակեցված չէր փաստաբանների իրավունքների և պարտականությունների շրջանակը: Հարկավոր էր նաև փաստաբաններին տալ հստակ երաշխիքներ, որ նրանք, իրենց վստահորդներին (պաշտպանյալներին) փաստաբանական ծառայություն մատուցելիս պաշտպանված լինեն անօրինական խուզարկումներից և հարցաքննություններից, որ նրանց երբևէ չպարտադրվի առանց վստահորդների/պաշտպանների թույլտվության հայտնելու իրենց վստահված տեղեկությունները (փաստաբանական գաղտնիքը) երրորդ անձանց:

[1] Տե՛ս «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ՀՕ-29-Ն, ընդունված՝ 14.12.2004թ.)

Բացի այդ՝ 2005 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում ամրագրվեց պետական միջոցների հաշվին իրավաբանական օգնություն տրամադրելու հնարավորությունը: Այսպես.

Հոդված 20. *Յուրաքանչյուր ոք ունի* ***իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով նախատեսված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին:*** *Յուրաքանչյուր ոք ունի ձերբակալման, խափանման միջոցի ընտրման կամ մեղադրանքի առաջադրման պահից իր ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունք:*

Անհրաժեշտություն առաջացավ նաև բարելավել անվճար իրավաբանական օգնության կառուցակարգերի խնդիրը, որում առաջնայնություն էր դիտվում ԵՄ-Հայաստան Եվրոպական հարևանության քաղաքականության գործողությունների ծրագրում, որտեղ մասնավորապես շեշտվում է, որ անհրաժեշտ է բարելավել հատկապես անվճար իրավական օգնության համակարգը[1]:

Անվճար իրավաբանական օգնության շրջանակների ընդլայնման համար «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում համապատասխան փոփոխություններ կատարելու պահանջ նախատեսված էր նաև Հայաստանի Հանրապետության Նախագահի 2009 թվականի ապրիլի 21-ի «Դատահիրավական բարեփոխումների 2009-2011 թվականների ռազմավարական գործողությունների ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու, ինչպես նաև աշխատանքային խումբ ստեղծելու մասին» ՆԿ-59-Ն կարգադրությամբ հաստատված միջոցառումների ցանկի 3.12-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 2009 թվականի մայիսի 6-ի «Եվրոպական հարևանության քաղաքականության Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական միություն գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2009-2011 թվականների միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՆԿ-68-Ա կարգադրությամբ հաստատված միջոցառումների ցանկի 27-րդ և 32-րդ կետերով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի «Կայուն զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N 1207-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 488-րդ կետով (ուժը կորցրել է՝ 08.05.2014թ.):

Նախատեսվող օրենսդրական փոփոխություններով առաջարկվում էր պետության կողմից ֆինանսավորվող անկախ փաստաբանների անվճար իրավաբանական օգնության տրամադրման շրջանակը ընդլայնել՝ հաշվի առնելով բնակչության՝ սոցիալապես խոցելի խավերի կարիքները: Այսպիսով, եթե առաջին փուլում անվճար իրավաբանական օգնությունը նախատեսվեց որոշակի կատեգորիայի քաղաքացիական գործերով, ապա երկրորդ փուլում այն ընդլայնվում էր որոշակի կատեգորիայի սուբյեկտների համար: Անվճար իրավաբանական օգնության տրամադրման շրջանակն ընդլայնելիս հիմք էր ընդունվել ոչ թե դատական գործի տեսակը, այլ օգնություն ստացողի սոցիալական դրությունը: Ընդ որում, նախատեսվում էր անվճար իրավաբանական օգնություն տրամադրել թե' քրեական, թե' քաղաքացիական և վարչական գործերով, թե' անձի՝ սահմանադրական դատարան դիմելու դեպքում: Բացի այդ, որպես անվճար իրավաբանական օգնություն, նախատեսվում էր ոչ միայն ներկայացուցչությունը դատարանում, այլև՝ իրավաբանական որակյալ խորհրդատվության տրամադրումը[2]:

---

[1] ԵՄ-Հայաստան Եվրոպական հարևանության քաղաքականության գործողությունների ծրագիր (ստորագրված՝ 11.11.2006թ.), առաջնային ոլորտ 1, https://safesoldiers.am/wp-content/uploads/2013/08/5.20..gorcoxutyunneri-cragir.pdf

[2] Տե՛ս Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի «Կայուն զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N 1207-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 488-րդ կետ (ուժը կորցրել է՝ 08.05.2014թ.)

Նախագծով առաջարկվում էր նաև ստեղծել փաստաբանական դպրոց: Մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետ մեխանիզմներ երաշխավորելու սահմանադրորեն ամրագրված դրույթները լուրջ մարտահրավեր են փաստաբանի մասնագիտական գործունեության համար: Փաստաբանի հեղինակությունը և գործունեության արդյունավետությունը մեծապես պայմանավորված են հատուկ մասնագիտական պատրաստվածությամբ և շարունակական վերապատրաստմամբ: Փաստաբանական դպրոցի կառուցվածքը, լիազորությունները և ուսուցման գործընթացը սահմանվել էին Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով նախատեսված դատական դպրոցին համապատասխան: Հաշվի առնելով հասարակությունում փաստաբանության դերի բարձրացման անհրաժեշտությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությունում փոփոխությունների հաճախականությունը՝ նախագծով նախատեսվում էր նաև անցկացնել փաստաբանների շարունակական վերապատրաստման դասընթացներ:

Այսպիսով, նշված օրենքի լրացումների և փոփոխությունների արդյունքում Հայաստանի Հանրապետությունը պետք է ունենար բարձր որակավորմամբ փաստաբաններ, հասարակության տարբեր սոցիալական խմբերի՝ անվճար իրավաբանական օգնության հնարավորություն, փաստաբանները պետք է առավել պաշտպանված լինեին կողմնակի միջամտությունից: Նախագիծն ընդունվեց Ազգային ժողովի կողմից 2011 թվականի դեկտեմբերի 8-ին[1]:

Նշված փոփոխությունների արդյունքում ներկայումս գործող «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված են փաստաբանի գործունեության համար անհրաժեշտ երաշխիքները և սկզբունքները, որոնք համահունչ են միջազգային փաստաթղթերից բխող պահանջներին: Այսպես.

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրով և Մարդու իրավունքների և հիմանարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայով սահմանված են անձանց իրավական պաշտպանության և իրենց նախընտրած պաշտպանի կամ ներկայացուցչի կողմից պաշտպանության իրավունքը:

1990թ. ընդունված «Փաստաբանների դերի մասին» (Իրավաբանների դերի մասին) ՄԱԿ-ի հիմնարար սկզբունքները հաստատում են բոլորի իրավական օգնության իրավունքը և կոչ են անում պետություններին բոլոր անձանց համար՝ առանց խտրականության ստեղծել փաստաբանների մատչելիության արդյունավետ և գործող մեխանիզմներ, ինչպես նաև ապահովել այդ մեխանիզմը բավարար ֆինանսավորմամբ և տրամադրել ռեսուրսներ՝ անվճարունակ անձանց համար իրավաբանական ծառայությունների համար[2]:

«Փաստաբանների դերի մասին» ՄԱԿ-ի հիմնարար սկզբունքները պահանջում են, որ պետությունները *ապահովեն, որ փաստաբանները կարողանան կատարել իրենց բոլոր մասնագիտական գործառույթները՝ առանց վախենալու, խոչընդոտների, ոտնձգության կամ ոչ պատշաճ միջամտության, դատական հետապնդման և դատական, վարչական, տնտեսական կամ այլ պատժամիջոցների չենթարկվեն՝ ընդունված մասնագիտական պարտականություններին, նորմերին ու բարոյականությանը համապատասխան ցանկացած գործողության համար, ինչպես նաև չեն-*

---

[1] ««Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ՀՕ-339-Ն, ընդունված՝ 08.12. 2011թ.)

[2] Տե՛ս Իրավաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքները (ընդունվել են հանցագործությունների կանխմանը և իրավախախտների հետ վարվելաձևին նվիրված ՄԱԿ-ի ութերորդ կոնգրեսի կողմից 27օգոստոսի-7սեպտեմբերի, 1990 թվական, Հավանա), Իրավաբանների և իրավաբանական ծառայությունների մատչելիությունը, 1-ից 4-րդ կետ:

թարկվեն նման հետապնդման և պատժամիջոցների սպառնալիքների[1]**:** Սկզբունքները նաև պահանջում են, որ փաստաբանները *օգտվեն քաղաքացիական և քրեական անձեռնմխելիությունից՝ կատարված համապատասխան հայտարարությունների համար:*[2]

Փաստաբանական գործունեությունը գտնվում է պետության անմիջական ուշադրության ներքո, ուստի իշխանությունները փաստաբանությանը վերաբերող ցանկացած փոփոխություն դիտարկելիս պետք է ղեկավարվեն հանրության և անհատի իրավունքների ու ազատությունների պատշաճ պաշտպանվածության ապահովման պետության պոզիտիվ պարտականությամբ: Փաստաբանությունը մի ոլորտ է, որի շարունակական զարգացումը հանրության և պետության կենսական շահերի տիրույթում է և այդպիսով ենթակա է պետության առանձնահատուկ ուշադրությանը և պաշտպանության արդյունավետ կառուցակարգերի ապահովմանը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 64-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը: (...):*

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ հստակորեն ընդգծվում է փաստաբանների իրավապաշտպան գործառույթը, ինչը և հիմք է հանդիսացել փաստաբանությանը սահմանադրական ինստիտուտի կարգավիճակ տալու համար, քանի որ պետությունը, ըստ նույն հոդվածի 1-ին մասի և 61-րդ հոդվածի, ունի պոզիտիվ պարտականություն ապահովել յուրաքանչյուր անձի իրավաբանական օգնություն ստանալու և իր իրավունքների ներպետական և միջազգային դատական պաշտպանություն ստանալու սահմանադրական իրավունքների իրացման պատշաճ սոցիալ-իրավական պայմաններ:

Նշվածից հետևում է, որ պետությունը հասարակության և յուրաքանչյուր անհատի հանդեպ իր՝ վերը նշված հիմնարար պարտականության պատշաճ իրացնելու համատեքստում կոնկրետ պարտականություններ ունի փաստաբանության ինստիտուտի նկատմամբ, և այդ պարտականությունն ամենևին չի սահմանափակվում միայն ձևական երաշխիքներով՝ փաստաբանության վերաբերյալ օրենք ընդունելով, հանրային պաշտպանի գրասենյակին պետական բյուջեից միջոցներ հատկացնելով, փաստաբանության ինքնակառավարման երաշխիքներ սահմանելով: Խոսքը վերաբերում է փաստաբանության համար արդյունավետ գործելու պայմաններ ստեղծելու պետության պարտականությանը: Նախևառաջ, անհրաժեշտ է ապահովել փաստաբանի գործունեության երաշխիքներ, մասնավորապես արգելել փաստաբանի անկախությանը և փաստաբանական գործունեությանը պետական մարմինների կողմից միջամտության ցանկացախ փորձ:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահը և ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը բազմիցս հանդես են եկել հայտարարություններով փաստաբանի գործունեությանը միջամտելու, խոչընդոտելու, ինչպես նաև փաստաբանների նկատմամբ սպառնալիք պարունակող մեկնաբանություններին համարժեք միջամտություն չցուցաբերելու դեպքերի վերաբերյալ:

ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը 15.07.2019թ. հանդես է եկել փաստաբան-վստահորդ խորհրդապահական եղանակով հաղորդակցության իրավունքի մասին հայտարարությամբ, որտեղ նշել է, որ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդին հայտնի են դարձել մի քանի դեպքեր, երբ փաստաբանների և վստահորդների միջև տեղի ունեցած խորհրդապահական խոսակցությունն արձանագրվել (ստացվել) է օպերատիվ հետախուզական գործունեության, մասնավորապես՝ հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման

[1] Տե՛ս նույն տեղում, 16-րդ կետ:
[2] Տե՛ս նույն տեղում, 20-րդ կետ:

արդյունքում: Հայտարարությունից պարզ է դառնում, որ ո'չ օրենքը (Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը կամ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը) և ո'չ էլ համապատասխան դատական որոշումները, այդ թվում՝ նաև ձևավորված դատական պրակտիկան, տարբերակում չեն դնում երկու՝ էապես տարբեր իրավիճակների միջև, երբ մի դեպքում գաղտնալսման սուբյեկտը սովորական քաղաքացի է, իսկ մյուս դեպքում՝ փաստաբան: Մինչդեռ, փաստաբան-վստահորդ հաղորդակցության գաղտնիությունը հանգամանք է, որը պետք է անվերապահորեն հաշվի առնվի դատարանների կողմից՝ օպերատիվ հետախուզական միջոցառման անհրաժեշտությունը գնահատելիս և համապատասխան որոշում կայացնելիս[1]:

Փաստաբանների մոտ խնդիրներ են ծագել նաև ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության հետ փոխհարաբերություններում: Այս օղակի հարկադիր կատարումն ապահովող ծառայության համապատասխան աշխատակիցները փաստաբանների կողմից դիմումների կամ այլ գրությունների ընդունման փուլում օրենքով չնախատեսված պահանջներ են ներկայացրել և արհեստական խոչընդոտներ են ստեղծել[2]:

ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը 2018 թվականի դեկտեմբերի 23-ին ընդունել է որոշում, որտեղ մասնավորապես նշել է, որ զանգվածային լրատվության միջոցների և սոցիալական ցանցերի հարթակներում հաճախակի են դարձել դեպքերը, երբ մասնագիտական աշխատանք կատարող փաստաբանը նույնացվում է իր վստահորդի հետ: Փաստաբանների նկատմամբ վերաբերմունքը հիմնականում պայմանավորված է նրանց վստահորդների անձով ու այդ անձանց վերաբերյալ հանրության բացասական ընկալումներով: Բազմաթիվ են փաստաբանների պատիվն ու արժանապատվությունը նսեմացնելու նպատակ հետապնդող, նույնիսկ սպառնալիք պարունակող մեկնաբանությունները[3]:

Նշվածից հետևում է, որ օրենքներում դրույթներ ամրագրելը դեռևս բավարար չէ փաստաբանության համար արդյունավետ գործելու պայմաններ ապահովելու համար: Պետությունը պետք է ձեռնարկի համապատասխան միջոցներ փաստաբանի գործունեության երաշխիքների ապահովման ուղղությամբ: «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված են փաստաբանի գործունեության համար անհրաժեշտ երաշխիքները և սկզբունքները, որոնք բխում են միջազգային փաստաթղթերով ամրագրված սկզբունքներից և երաշխիքներից, մինչդեռ անհրաժեշտ է, որ դրանք ոչ միայն ամրագրված լինեն օրենքում, այլև կյանքի կոչվեն:

[1] http://advocates.am/news/view/2452.html
[2] http://advocates.am/images/haytararutyunneri_fayler/2018/Grutyun_AN_DAHK_gortsoghutyunner_18.07.2018.pdf
[3] http://advocates.am/news/view/2101.html

ОСОБЕННОСТИ РАЗВИТИЯ ИНСТИТУТА АДВОКАТУРЫ В ТРЕТЬЕЙ РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Нелли Арутюнян
Адвокат

В статье рассматривается путь развития института адвокатуры в Третьей Республике Армения. Описаны достижения в области адвокатуры, гарантии и принципы, предусмотренные законом и международными документами необходимые для адвокатской деятельности.

Обсуждаются необходимые условия для эффективной деятельности адвоката, гарантии, необходимые для деятельности адвоката, выявляются существующие проблемы. В статье также представлены необходимые меры для обеспечения гарантий деятельности адвоката, которые должны приниматься государством.

FEATURES OF DEVELOPMENT OF THE ADVOCACY INSTITUTE IN THE THIRD REPUBLIC OF ARMENIA

Nelli Harutyunyan
Advocate

The article discusses the development of the advocacy institute in the third Republic of Armenia. The article talks about the achievements in the field of advocacy, about the guarantees and principles prescribed by law and international documents necessary for advocacy.

The article discusses the conditions that are necessary for the effective activities of advocate, the guarantees that are necessary for activities of advocate, arises the existing problems. The article talks about the necessary measures which should be taken by the state to ensure guarantees for the activities of advocate.

Բանալի բառեր- փաստաբան, փաստաբանական գործունեություն, փաստաբանի գործունեության երաշխիքներ, փաստաբանի անկախություն, փաստաբանական գործունեությանը պետական մարմինների կողմից միջամտություն

Ключевые слова - адвокат, адвокатская деятельность, гарантии деятельности адвоката, независимость адвоката, вмешательство государственных органов в адвокатскую деятельность

Keywords - advocate, activities of advocate, the guarantees necessary for activities of advocate, independence of advocate, government interference in activities of advocate